ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» մայիսի 2016 թ. N 56

ք.Ստեփանակերտ

ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ (ԱՊՐՈԲԱՏՈՐԻ) ՎԿԱՅԱԳՐԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողի (ապրոբատորի) հավաստագրման կարգը և սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների մասին հայտի ձևը հաստատելու մասին» N 88 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետի ա) ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողի (ապրոբատորի) հավաստագրման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 19-ի NN 1, 2 և 3 եզրակացությունները՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Բավարարել հայտատու Ն. Մելքումյանի հայտը և տրամադրել ցորենի, գարու և եգիպտացորենի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողի (ապրոբատորի) N 017 վկայագիրը 3 (երեք) տարի ժամկետով:
2. Բավարարել հայտատու Գ. Հակոբյանի հայտը և տրամադրել ցորենի, գարու և եգիպտացորենի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողի (ապրոբատորի) N018 վկայագիրը 3 (երեք) տարի ժամկետով:
3. Բավարարել հայտատու Վ. Հարությունյանի հայտը և տրամադրել ցորենի, գարու և եգիպտացորենի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողի (ապրոբատորի) N019 վկայագիրը 3 (երեք) տարի ժամկետով:

Ա. ՄԽՈՅԱՆ